

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱՌ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊՆ ՀՌՈՄԱ, ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՎՈ

ՎԱՏԻԿԱՆ, ՀՌՈՄ

Զերդ Սրբություն.

Մեզի համար հոգեկան մեծ գոհունակություն է Զերդ Սրբության ուղղել Մեր սույն գիրը, մեր Եկեղեցվո և ժողովուրդի համար պատմական նշանակություն ունեցող մեկ պահին:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և համայն հայ ժողովուրդը հառաջիկա տարի պիտի հիշատակեն հիսնամյակը Արևմտյան Հայաստանի (Թուրքական Հայաստանի) մոտ երկու միլիոն հայերի նահատակության, որ սկիզբ առավ 24 ապրիլ 1915 թվականին:

Թրքահայաստանի ամբողջ հայ ժողովրդի բնաջնջումը կատարվեց ծրագրված ու պետականորեն կազմակերպված ձևով, սուլթանական կառավարության կողմից: 1915—1920 թվականների ժամանակաշրջանում, պատմական Հայաստանի հազարամյա քաղաքներ և գյուղեր, վանքեր և եկեղեցիներ թալանվեցին, հրկիզվեցին ու ավերակների կույտի վերածվեցին, և ամբողջ մի ժողովուրդ՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ, ֆիզիկական ու բարոյական վարհուրելի տառապանքների մեջ, դեպի Հյուսիսային Սուրիայի անապատները քշվեցին ու ջարդվեցին:

Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրև քրիստոնյա և ազատ ազգություն:

Մենք, իբրև Հայրապետ Հայ Եկեղեցու, Մեր խղճի պարտքը նկատեցինք հատուկ մի կոնդակ գրի առնել, 17 օգոստոս 1964 թվակիր, նվիրված Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի այս մեծ ողբերգության հիսնամյա տարելիցին, 1965 թվականը հռչակելով սուգի և աղոթքի տարի:

Այսու Ձերդ Սրբության և համայն Կաթողիկե Ս. Եկեղեցու բարձր ուշադրությունը հրավիրում ենք սույն տարելիցի վրա, խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գութի և արդարության զգացումից, պիտի կամենայիք առաջիկա տարի ապրիլ 24-ի օրը Ձեր և Ձեր մեծ Եկեղեցու աղոթքը միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար:

Ձերդ Սրբության և բոլոր մեր քույր եկեղեցիների աղոթքները համայն հայ հավատացյալ ժողովրդի վշտահար սրտի համար պիտի հանդիսանան հոգեկան խորունկ մխիթարություն:

Ընդունեցեք, Սրբազան Հովվապետ, Մեր եղբայրական հարգանքի և սիրո ողջույնը և Մեր ջերմագին մաղթանքները քաջառողջության, որպեսզի երկար տարիների երջանիկ հովվապետությամբ Ձեր սուրբ գործերով առավել փառավորեք Ձեր մեծ Եկեղեցին:

Սիրով ի Քրիստոս,

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 սեպտեմբերի 1964 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Համանման բովանդակությամբ գրություններ ուղարկվեցին նաև՝

1. Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին,

2. Քենտրբերիի Արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. Մայքլ Ռեմսիին,

3. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, պատվելի դոկտ. Վիսսեր դ՝Հուֆտին: